

18455

361:371.8

4-21

1894

361:371.8

4-21

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԲԱՐԻՉՈՒ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱՅ

ԲՆԿԱՏԵՂԻՈՅ ԽՆԱՄԿԱԼՈՒԹԵԱՆ

2010

361:34.8

4-21

Աւս

Ի ՓԱՐԻԶ ՀԻՄՆՈՒԱԾ Է
ՀԱՄԱԼՍՈՐԱՆԱԿԱՆ ԵՒ ՆՊԱՍՏԱՄՍՏՈՅՑ ՄԻ ԳՈՐԾ

ՓԱՐԻԶԻ ՀԱՅ ՈՒՍՏԱՆՈՂԱՅ

ԲՆԱԿԱՏԵՂԻՈՅ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ԱՆՈՒՆՈՎ

Բնակատեղոյ Խնամակարութեան նպատակն է՝

Նախ յիշ բնակարան հայեցելն այն Հայ ուսանողաց՝ որք 80 կամ 100 ֆրանգէ աւելի հասցի չունենալուն՝ Փարիզ ուսմունքնին կատարելագործելու գալու համար նեցուկի մը պէտք ունին:

Երկրորդ՝ Բարոյապէս անիտիք օգնել Հայ ուսանողաց, որպէս զի փարիզեան բազմաժախ միջավայրին մէջ, կարենան խնայողական և բարեկեցիկ պայմաններու մէջ, իրենց ուսմանց պարագիւր:

Բնակատեղոյ Խնամակարութիւնը վստահութեամբ կը դիմէ Փարիզի Հայ գաղթականութեան, ոչ փարիզաբնակ ազգայնոց և Հայ ուսանողութեան բարեկամաց:

1007
30595



0 0 0 9

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Պատուոյ նախագահ

ՏԻՍՐ ԲՕԼ ՄԸԼՈՆ

Ընդհանուր քարտուղար Փարիզի օտար ուսանողաց պաշտպան ընկերութեան որ ի Սօրպօն:

Բնակատեղոյ խնամակալութեան կեդրոնական խորհուրդը կը կազմեն՝

Տէր Զօրայեան Վաճառական ի Փարիզ, Մօպէօփ փողոց, Ն^o. 42.

Տէր Հեռեարդէյեհիւթեան Դեղագործ ի Փարիզ, Շաթօ սօ փողոց, Ն^o. 76.

Տէր Մինասեան (Արտաշէս) Վաճառական ի Փարիզ, Շանթիլի փողոց, Ն^o. 1.

~~Տէր Կոնստանտին Սպեան, Հոգևոր հովիւ Փարիզի Հայոց. Գլօս Պէրնար փողոց, Ն^o. 73.~~

Տէր Օրդէրֆ. Վաճառական ի Փարիզ, Մարթէլ փողոց Ն^o. 14.

Կեդրոնական խորհրդի անդամոց երկցագոյնը՝
խորհրդի նիստերուն կը նախագահէ:

Տէր Յ. Ալեհանեան ուսանող ի Փարիզ, Վօժիրար փողոց, Ն^o. 47. խորհրդին ատենադպրութեան պաշտօնը կը վարէ:

ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԵՈՑ ԱՆԴԱՄՆԵՐՆ ԵՆ

Տէր Ալեհանեան, Տնօրէն:

Տէր Հեռեարդէյեհիւթեան, խորհրդատու անդամ:

~~Տէր Կոնստանտին Սպեան, խորհրդատու անդամ:~~

ԿԱՆՈՆԱԳԻՐ

Հ Ա Տ Ո Ւ Ա Ծ Ա .

ՆՊԱՏԱԿ

1. Փարիզի Հայ գաղթականութեան մէջ 1894 Յունուար 17ին հիմնուած է հասարակական և նպաստամարտոյ մի գործ՝ Փարիզի Հայ ուսանողաց Բնակարեղոյ Խնամակալութիւն (Œuvre de Logements des étudiants Arméniens de Paris) անունով:
2. Փարիզի Հայ ուսանողաց Բնակարեղոյ Խնամակալութեան նպատակն է՝
Նախ յրբ Բնակարան հայտայնել, և այս եղանակաւ օգնել այն Հայ ուսանողաց, որք 80 կամ առ առաւելն 100 Քր. ի ամսեայ կանոնաւոր հասոյթով (առանց հաշուելու համալսարանական տուրքերու ծախքերը) ուսմունքնին կատարելագործելու բարձր և զովելի նպատակաւ Փարիզ կը փափաքին գալ:
Երկրորդ՝ իւրովսանն Բարոյակէս անխորթ օգնել ամէն դասակարգի և ամէն կրօնի Հայ ուսանողաց, և իրենց հայթայթել պէտք եղած տեղեկութիւնքը, որպէս զի բազմաձախ փարիզեան միջավայրին մէջ՝ դիւրութեամբ կարենան իրենց վիճակին համեմատ՝ խնայողական և բարեկեցիկ պայմաններու մէջ ապրիլ և իրենց ուսմանց պարապիլ:
3. Փարիզի Հայ ուսանողաց Բնակատեղոյ Խնամակալութեան կեդրոնատեղին է ի Փարիզ:

Հ Ա Տ Ո Ւ Ա Ծ Բ .

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ ԵՒ ՎԱՐՁԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

4. Բնակատեղոյ Խնամակալութիւնն ունի մի կեդրոնական Խորհուրդ և վարչական մարմին:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ

5. Հայ գաղթականութեան մէջ հանրածանօթի և փորձաքննակ ազգայինք, առանց խտրութեան սեռի, կը կազմեն Բնակատեղոյ Խնամակալութեան կեդրոնական Խորհուրդն:
6. կեդրոնական Խորհրդի անդամակցիլն ընդունող ազգայինք՝ կը ստանձնեն միանգամայն Բարոյական պարտախնամարտութիւն անվճար պահելու Բնակատեղոյ Խնամակալութեան համալսարանական և նպաստամարտոյ կերպարանքը:
7. կեդրոնական Խորհրդի անդամոց թիւը սահմանափակ չըլլալուն՝ Խորհուրդը կարող է պատեհ առթին անդամակցելու հրաւիրել՝ Խնամակալութեան նպատտող ազգայիններն ևս, և այս եղանակաւ իւր համակրութիւնն արտայայտել:
8. կեդրոնական Խորհրդի նիստը տեղի կ'ունենայ վեց ամիսը միանգամ Մարտ և Սեպտ.

ամանոց վերջերը. բայց Խորհուրդը կարող է արտաքոյ կարգի նիստ ունենալ Վարչական մարմնոյ խնդրանօք, կամ Խորհրդին անդամներուն մէկ երրորդ մասին գրաւոր առաջարկութեամբ:

9. Կեդրոնական Խորհրդի նիստը կանոնաւոր է իւր անդամներուն մէկ երրորդ մասին ներկայութեամբ. եթէ Ա. և Բ. գումարման այս թիւը չի լրանայ՝ երրորդ գումարումը կանոնաւոր նիստ կը համարուի՝ որ և է թուով անդամներու ներկայութեամբ:
10. Կեդրոնական Խորհրդի ղեկանը կը բաղկանայ մի նախագահէ և մի ատենադպրէ:
11. Կեդրոնական Խորհուրդն իւր կանոնաւոր նիստերուն մէջ ծանօթութիւն կ'առնու Վարչական մարմնոյ վեցամսեայ գործառնութեանց վրայ, կը քննէ և կը վաւերացնէ ամբողջ հաշիւները, կ'արտօնէ հարկ դատած ծախքերն, կը նշանակէ Խնամակալութեան բնակարաններն, ընդունուելիք ուսանողաց թիւն և անուններն և Վարչական մարմնոյ կը յանձնէ իւր որոշմանց գործադրութիւնը:
12. Կեդրոնական Խորհրդի որոշումները պէտք են լինել քուէից բացարձակ առաւելութեամբ:
13. Կեդրոնական Խորհուրդն իրաւունք ունի անդամակցութենէն հրաժարեցնել այն անդամները՝ որք խնամակալութեան շահերուն հակասուի կը հորձեն:
14. Բնակատեղոյ Խնամակալութեան բարոյապէս զնահատելի ծառայութիւն մատուցած

կամ՝ նիւթական նպաստներ ըրած օտարազգիք, և ոչ փարիզաբակ Հայերն՝ Վարչ. մարմնոյ առաջարկութեան վրայ Կեդրոնական Խորհրդի որոշմամբ, Խորհրդին պատուոյ անդամ կ'անուանուին:

ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

15. Վարչական մարմինը՝ Բնակատեղոյ Խնամակալութեան վարիչ մարմինն է:
16. Վարչական մարմինը կը բաղկանայ երեք անդամէ. մի Տնօրէնէ և երկու Խորհրդատու անդամներէ:
17. Տնօրէնը կ'ընտրուի Կեդրոնական Խորհրդի կողմանէ, և Խորհրդին առջև ինքը միայն պատասխանատու է:
18. Երկու Խորհրդատու անդամները Տնօրէնին ներկայացմամբ՝ Կեդրոնական Խորհրդի անդամոց մէջէն կ'ընտրուին:
19. Վարչական մարմնոյ պաշտօնը կը տեւեր երեք տարի. բայց անդամները վերստին ընտրելի են:
20. Վարչական մարմինը կը գումարի շաբաթը մի անգամ:
21. Վարչական մարմինը կը պարտի Կեդրոնական Խորհրդին որոշումներն իրագործելու յարմար գործնական միջոցներն որոշել, և Տնօրէնին յանձնել իւր որոշումներու գործադրութեան և բնակարաններու առօրեայ մատակարարութեան հոգը:

- 22. Վարչական մարմինն իրաւասութիւն չունի՝ առանց կեդրոնական խորհրդի հաւանութեան՝ կարևոր բարեփոխումներ ներմուծելու բնակարաններուն մատակարարութեան և ղանակին մէջ:
- 23. Վարչական մարմինը կը պարտի իւր հաշիւները կեդրոնական խորհրդին ներկայացնել ամէն վեցամիս, և խնամակալութեան նպաստողաց յղել՝ կեդրոնական խորհրդէ վաւերացեալ վեցամսեայ գործառնութեանց ամբողջ հաշիւները:

ՏՆՕՐԷՆ

- 24. Բնակատեղւոյ խնամակալութեան Տնօրէնը կեդրոնական խորհրդի մէջ ատենադպրութեան պաշտօն ունի, խորհրդին առջև՝ վարչական մարմնոյ միակ պարտախոսարան ղամն է, և խնամակալութեան բնակարաններուն առօրեայ մատակարարութեան գործօն գերն ունի:
- 25. Տնօրէնը կը գործէ վարչական մարմնոյ հաւանութեամբ. զի առանց անոր հաւանութեան գործելու իրաւունք չունի:
- 26. Տնօրէնը՝ խնամակալութեան կեդրոնատեղւոյն մէջ ունի իւր գրասենեակն, ուր կ'ընդունի եկող այցելուները, խնամակալութեան շահուց վերաբերեալ նամակք, գրութիւններն և նուիրատուութիւնք, և այլն և այլն:
- 27. Տնօրէնն ի փոխարէն իր ընդունած գու-

- մարներուն և նուէրներուն՝ պարտաւոր է տալ մի ընկալագիր իւր ստորագրութեամբ, և Բնակատեղւոյ խնամակալութեան կնքով վաւերացեալ:
- 28. Տնօրէնն՝ ընդունած անբողջ գումարները կը յանձնէ կեդրոնական խորհրդի Քանձապահ ընտրած անձին՝ որ պարտաւոր է սոյն գումարներն իւր անուան գետեղել խնայողական արկեղ մը մէջ, և ընկալատետրը Տնօրէնին վերադարձնել:
- 29. Քանի անգամ որ վճարումն մ'ընել հարկ ըլլայ՝ Տնօրէնը վարչական մարմնոյ հաւանութիւնն ստանալէ յետոյ՝ Քանձապահին կը դիմէ և իրմէ կը ստանայ պէտք եղած գումարը:
- 30. Քանի անգամ որ ո՛ր և է վճարումն մ'ընէ Տնօրէնը՝ կը պարտի պահել վճարման փոխարէն ընդունած տոմսը կամ հաշուեգիրը:
- 31. Տնօրէնը կեդրոնական խորհրդի և վարչական մարմնոյ գումարմանց համար՝ որոշեալ թուականներէն երկու օր առաջ ժողովքի կը հրաւիրէ անգամները:

Հ Ա Տ Ո Ւ Ա Մ Գ .

ԲԱՐԵՐԱՐ, ՀԻՄՆԱԴԻՐ, ԿԱՆՈՆԱԽՈՐ, ՊԱՐԶ
ԵՒ ՆՈՒԻՐԱՏՈՒ ԱՆԴԱՄՔ

- 32. Բնակատեղւոյ խնամակալութեան նպատող ազգայինք, և Փարիզի Հայ ուսանողութեան բարեկամք, կը բաղկանան Բարերար, Հիմնադիր, Կանոնաւոր, Պարզ եւ Նուիրաւոր անդամներէ:
- 33. Բարերար անդամք կը վճարեն (առ նուազն) 600 Ֆր. տարեկան կանխիկ:
- 34. Հիմնադիր անդամք կը վճարեն (առ նուազն) 400 Ֆր. տարեկան կանխիկ:
- 35. Կանոնաւոր անդամք կը վճարեն 20 Ֆր. եռամիսը կամ 10 Ֆր. ամսէ ամիս:
- 36. Պարզ անդամք կը վճարեն 3 Ֆր. եռամիսը:
- 37. Նուիրատու անդամք Տնօրէնին մօտ խնամակալութեան պիտոյեցը վրայ տեղեկութիւն առնելով՝ օգտակար կարասի, գրքեր և լրագրեր կը նուիրեն:
- 38. Բարերար, հիմնադիր, կանոնաւոր, պարզ և նուիրատու անդամք անձամբ կամ նամակաւ կարող են Տնօրէնէն խնդրել պիտանի և կարևոր տեղեկութիւններ:
- 39. Բարերար, հիմնադիր, կանոնաւոր, պարզ, և նուիրատու անդամք կեդրոնական խորհրդի կը յանձնարարեն իրենց օգնուելու արժանի դա-

տած ուսանողն, և կրնան սենեակ խնդրել. երբոր տրամադրելի սենեակ գտնուի՝ կեդրոնական խորհուրդը կ'արտօնէ վարչական մարմինը գոհացնել իրենց խնդիրը. բայց յանձնարարուած ուսանողին բնակարան յատկացուելու համար յանձնարարեալը պէտք է կանոնադրիս Ե. Հատուածին 48 յօդուածին մէջ յիշուած ընդունելի ըլլալու պայմաններուն մէջ գտնուի:

- 40. Բարերար և հիմնադիր անդամներու այս նըպատամատոյց գործին ըրած նիւթական և բարոյական բացառիկ գոհողութեանց ի պատասխան՝ կեդրոնական խորհուրդը ամէն տարի բարերար անդամներու երկու և հիմնադիր անդամներու յէկ սենեակ տրամադրելի կը պահէ, զորս իրենց յանձնարարած ուսանողներուն կը յատկացնէ:

Հ Ա Տ Ո Ւ Ա Մ Գ .

ԲՆԱԿԱՏԵՂԻՈՅ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԵԿԱՄՈՒՏՔ
ԵՒ ԳՈՅՔԵՐՆ ԵՒ ԻՐԵՆՅ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

- 41. Բնակատեղւոյ խնամակալութեան եկամուտք և գոյքերը կը գոյանան Բարերար, հիմնադիր, կանոնաւոր և պարզ անդամոց կանոնաւոր վճարումներովը հաւաքուած գումար-

ներէ, ի նպատակ խնամակալութեան Կեդրոնական Խորհրդին արտօնութեամբ տրուած հանդէսներու արդիւնքէն, և նախորդ անգամոց տուած կարասեաց և գրքերէն:

- 42. Գոյքերու պահպանման կը հսկէ Վարչական մարմինը:
- 43. Գոյքերէ որ և է իր մը չի կրնար վաճառուիլ առանց Կեդրոնական Խորհրդի հաւանութեան:
- 44. Կեդրոնական Խորհրդի որոշմանց համաձայն՝ բնակատեղւոյ խնամակալութեան եւ կամուտը կը գործածուին միայն խնամակալութեան բնակարաններուն վարձքն և մանր ծախքը վճարելու և անհրաժեշտ կարասեաց դնման:
- 45. Խնամակալութեան տարեկան հասոյթին երկու երրորդը միայն անհրաժեշտ ծախուց կրնայ յատկացուիլ, իսկ մնացածն իբր պահեստի դրամ կը պահուի:

Հ Ա Տ Ո Ւ Ա Մ Ե .

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅ ՄԵՋ

ԲՆԴՈՒՆԵԼԻ ԸԼԼԱԼՈՒ ՊԱՅՄԱՆՔ

- 46. Խնամակալութենէն բնակարան ընդունիլ փափաքող ամէն Հայ ուսանող՝ Յուլիս և

Օգոստոս ամսոց մէջ, պէտք է Տնօրէնին հասցընէ իւր խնդրագիրը հանդերձ մի նամակաւ, որով Կեդրոնական Խորհրդի յանձնարարուած ԸԼԼայ Բարեբար, հիմնարկը, կանոնադր կամ դարչ անդամի մը կողմանէ:

- 47. Կեդրոնական Խորհուրդն տրամադրելի սենեակները կը յատկացնէ այն ուսանողաց միայն՝ որք իրենց խնդրագրոյն մէջ կ'ապացուցանեն միանգամայն թէ խնամակալութեան բնակարանաց մէջ ընդունելի ԸԼԼայու պայմաններու մէջ կը գտնուին:

- 48. Խնամակալութեան բնակարանաց մէջ ընդունելի ԸԼԼայու պայմաններու մէջ գտնուելու համար խնդրարկուն պէտք է՝

1°. Հայ ուսանող ԸԼԼայ և Փարիզի համալսարանը մուտք ունենալու համար պահանջուած վկայագիրն ունենայ:

2°. Ունենայ (առանց հաշուելու համալսարանական տուրքերու ծախքերն), առ նուազն 80 Ֆր. կամ առ առաւելն 100 Ֆր. ամսական կանոնաւոր ապահով հասոյթ. զի հակառակ պարագային մէջ՝ Կեդրոնական Խորհուրդը հաւասարապէս կը մերժէ բնակարան տալ, նկատելով որ 80 Ֆր. է նուազ հասոյթ ունեցողը՝ չեն կարող օգտուիլ իր օգնութենէն. իսկ 100 Ֆր. է աւելի հասոյթ ունեցողը պէտք չունին իր նպաստից:

3°. Յանձն առնու կանոնաւորապէս պէտք եղած վճարումներն ընել համալսարանի, և տարւոյ վերջն իւր քննութիւնքն անցնել:

- 49. Բնակատեղւոյ խնամակալութեան հասոյթը

տարեկան են. արդ քանի անգամ որ ուսանողի մը սենեակ մը յատկացուի մի տալուսան համար է. մի և նոյն օգնութենէն երկրորդ, երրորդ, չորրորդ և աւելի տարիներ օգտուիլ ուզող ուսանողք՝ կը պարտին առջի անգամուն պէս աւելի դատ ինքրաբեր մը տալ, յանձնարարութիւն մը և քննութեանց վկայութիւնն ներկայացնել:

50. Հոկտեմբեր ամսոյ մէջ իւրաքանչիւր խընդարակու զինքն յանձնարարող անձին միջոցաւ Տնօրէնէն կ'ընդունի իւր խնդրագրին նկատմամբ կեդրոնական խորհրդի որոշման վերջնական ծանուցումը:

Հ Ա Տ Ո Ւ Ա Մ Զ.

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԵՒ ԻՐԵՆՑ
ՄԱՍԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆՔԸ

- 51. Խնամակալութեան սենեակները կը վարձուին մի և նոյն տան մէջ:
- 52. Վարձուած սենեակներն օդաւէտ և իրարմէ անկախ են և խնամով կահաւորուելով կոկիկ կը պահուին:
- 53. Բնակարաններուն առօրեայ մատակարարութեան գործօն դերը յանձնուած է Տնօրէնին:

- 54. Կեդրոնական խորհրդէ իրեն սենեակ յատկացուած ուսանողը երբ Փարիզ հասնի ուղղակի կը դիմէ Տնօրէնին:
- 55. Տնօրէնը Բնակատեղւոյ Խնամակալութեան Կեդրոնատեղւոյն մէջ իւր գրասենեակը կ'ընդունի այցելուներն որոշեալ օրեր:
- 56. Խնամակալութեան բնակարաններն ընդունող ամէն ուսանող՝ Տնօրէնին կ'իմացնէ իւր անունը, մականունը, տարիքը, ծննդավայրն և ինչ ուսամար զբաղին, որպէս զի կարելի ըլլայ ոստիկանապետութեան հաղորդել օրինական պէտք եղած տեղեկութիւնքը:
- 57. Յատուկ սպասաւոր մը կը մաքրէ և կը կարգադրէ իւրաքանչիւր ուսանողի սենեակն և բնակարաններն առողջապահիկ պայմաններու մէջ պահելու խնամ կը տանի:
- 58. Սպասաւորին ծառայութեանցը փոխարէն՝ ամէն ուսանող ամիսը 3 ֆր. ի գումար մը կը յանձնէ Տնօրէնին:
- 59. Խնամակալութեան բնակարանները պարտաւոր պահուիլ մը կը կազմեն. արդ հոն ընդունուած ուսանողք կը դիտեն պատուաւոր պանդոկի մը մէջ գործադրուած կանոնները:
- 60. Իւրաքանչիւր ուսանողի դատ սենեակ մը կը տրուի. սակայն եթէ սենեակ մ'երկու հոգւոյ բաւելու չափ մեծ ըլլայ՝ այն ատեն երկու հոգւոյ մէկ սենեակ կրնայ տրուիլ:
- 61. Բնակատեղւոյ Խնամակալութիւնն ունի մի գրադարան որմէ կրնան օգտուիլ բնակարանաց մէջ ընդունուած ուսանողք. եթէ դրսէ ուսանող մ'ուզէ զբաղարանը մուտք ունեն

նալ՝ պէտք է կանխաւ արտօնութիւն առնու
վարչական մարմնէ:

62. Խնամակալութիւնն ունի հիւրասրահ մ'ուր
ուսանողք կ'ընդունին իրենց ծանօթներն
և կը դռնեն օգտակար լրագրեր և շարա-
թաթերթեր:

63. Ամսեայ 1 Ֆր. բաժնեզին վճարող ուսա-
նողք՝ իրենց փոքրիկ անհանգստութեանց
ժամանակ յատուկ բժշկի մը կողմանէ կը
խնամուին:

64. Ուսանող ըլլալէ դադրած, կամ ուսանող
մնալով հանդերձ բաւական հասոյթ չունե-
ցող կամ Խնամակալութեան բարի համբա-
ւոյն փնասելու դիտմամբ գործող ուսանողք՝
վարչական մարմնոյ որոշմամբ իրենց սե-
նեկէն զրկուելով Բնակատեղիէն կը ճամ-
բուին:



Հ Ա Տ Ո Ւ Ա Մ Է .

ՎԵՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

65. Խնամակալութեան նպատակն անփոփոխ է .
իսկ կանոնագիրն երեք տարիէ վերջը կա-
րելի է վերաքննուիլ . բայց ստիպողական
պարագայներուն՝ վարչական մարմինը, կամ
Կեդրոնական Խորհրդի անդամներուն մէկ
երրորդ մասը՝ կարող է բարեփոխումն առա-
ջարկել Կեդրոնական Խորհրդին:

Կանոնագիրս Կեդրոնական Խորհրդէ վաւե-
րացեալ բնագրին համաձայն է:

Փարիզ, 17 հոտոս 1894

Տնօրէն

ՅԱԿՈՒ Կ . ԱԼԹՈՒՆԵԱՆ

Ուսանող Իրաւագիտութեան համալսարանի և
աշակերտ Բարոյական և քաղաքական գիտու-
թեանց:



Հ 4402
7001

58

J 6040802

Ամէն Հինգշաբաթի և Կիրակի ժամը
1 և 5 Տնօրէնը կ'ընդունի այցելուները
իւր գրասենեակը՝ Բնակատեղւոյ Խնամակալութեան կեդրոնատեղին :

Նամակ և նուիրատուութիւնք կը
դրկուին Բնակատեղւոյ Խնամակալու-
թեան կեդրոնատեղին հետեւեալ հաս-
ցէին :

M. ALTOUNIAN

Direction de l' Œuvre de Logements
des étudiants arméniens de Paris

55, RUE CLAUDE BERNARD

PARIS

2013

« Ազգային գրադարան

10451



NL0050333

